600.0289.31.07.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

31 հուլիսի 2019 թվականի №289Ա
ք.Երևան

«ԲԱՐԻ ԱՐԵՎ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԷ №0626 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի նոյեմբերի 30-ի «ԲԱՐԻ ԱՐԵՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Բարի Արև» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №436Ա որոշմամբ «ԲԱՐԻ ԱՐԵՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Բարի Արև» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0626 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ №0626 լիցենզիա),

բ) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական կայքում տեղակայված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2019 թվականի մայիսի 15-ին տեղի է ունեցել Ընկերության գտնվելու վայրի փոփոխություն, մինչդեռ Ընկերությունը Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանված ընթացակարգով և ժամկետում չի դիմել Հանձնաժողով՝ ԼԷ №0626 լիցենզիան վերաձևակերպելու համար,

գ) Կարգի 90-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման, կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձը պարտավոր է, այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած

տասնհինգօրյա ժամկետում, լիցենզիայի վերաձևակերպման համար հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ կցելով տեղեկություններ պետական գրանցման համարի (պետական հաշվառման համարի) վերաբերյալ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

դ) Հանձնաժողովը 2019 թվականի հուլիսի 24-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ Կարգի 90-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի շրջանակում Ընկերությունը 2019 թվականի հուլիսի 26-ի գրությամբ, ըստ էության, ընդունել է կատարված խախտումը և խնդրել գտնվելու վայրի փոփոխման հիմքով վերաձևակերպել ԼԷ №0626 լիցենզիան,

ե) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կարգի 90-րդ կետի պահանջը, քանի որ ԼԷ №0626 լիցենզիայի վերաձևակերպման հայտը ներկայացրել է Կարգի 90-րդ կետով սահմանված տասնհինգօրյա ժամկետի խախտմամբ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը և Կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարգի 90-րդ կետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Վերաձևակերպել ԼԷ №0626 լիցենզիան՝ լիցենզիայի պայմաններում «գտնվելու վայրը» տողը շարադրելով հետևյալ խմբագրությամբ.
   «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Աբելյան փողոց 3/4» :
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ որոշման 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2019 թվականի օգոստոսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱԴՐԱՍՅԱՆ**

ք. Երևան
31 հուլիսի 2019թ.